ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 2239-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.01.18/3(458) Հոդ.91	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	09.12.2005
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	30.12.2005
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	08.01.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28.01.2006	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ (ԱՊՐՈԲԱՏՈՐԻ) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
8 հունվարի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2005 թվականի N 2239-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ (ԱՊՐՈԲԱՏՈՐԻ) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սերմերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետությունում սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավատարմագրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետությունում սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների մասին հայտի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ եռամսյա ժամկետում հաստատել՝

ա) գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների մասին հրահանգները.

բ) սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողների (ապրոբատորների) հավատարմագրման հանձնաժողովի կազմը և աշխատակարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2005 թ. դեկտեմբերի 30
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 9-ի N 2239-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ (ԱՊՐՈԲԱՏՈՐԻ) ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարող ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ապրոբատոր) հավատարմագրման ընթացակարգը:

2. Հայաստանի Հանրապետությունում ապրոբատորի հավատարմագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ լիազորված մարմին):

3. Վկայագիրն ապրոբատորին տրվում է գյուղատնտեսական մշակաբույսերի որոշակի տեսակների և դասերի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ (այսուհետ՝ ապրոբացիա) կատարելու համար՝ մինչև 3 տարի ժամկետով:

4. Ապրոբատորը պետք է տիրապետի սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների (տեսակային և սորտային մաքրության ու միատարրության, մշակաբույսերի՝ մոլախոտերով, հիվանդություններով ու վնասատուներով վարակվածության) մասին հրահանգներին:

II. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

5. Լիազորված մարմինն ապրոբատորների հավատարմագրման համար հրապարակում է հայտարարություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Հայտատուն հավատարմագրման համար լիազորված մարմին է ներկայացնում դիմում (այսուհետ՝ հայտ):

7. Հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո 5-օրյա ժամկետում լիազոր մարմնի կողմից ստեղծված ապրոբատորների հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) կատարում է ստացված հայտերի ուսումնասիրություն և յուրաքանչյուր հայտի համար լիազորված մարմնի ղեկավարին ներկայացնում է եզրակացություն:

Եթե հայտատուն չի բավարարում սույն կարգի 4-րդ կետի պահանջները, ապա հանձնաժողովը տալիս է բացասական եզրակացություն:

8. Լիազորված մարմնի ղեկավարը հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո եռօրյա ժամկետում ընդունում է որոշում՝

ա) հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում՝ ապրոբատորին վկայագիր տալու մասին,

բ) հանձնաժողովի բացասական եզրակացության դեպքում՝ ապրոբատորին վկայագիր տալը մերժելու մասին:

9. Հավատարմագրված ապրոբատորին տրվում է վկայագիր՝ համաձայն ձևի: Վկայագիրը համարակալված փաստաթուղթ է, որը ենթակա չէ այլ անձի փոխանցման:

III. ԱՊՐՈԲԱՏՈՐԻ ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

10. Ապրոբատորի վկայագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվում է լիազորված մարմնի ղեկավարի կողմից՝ հանձնաժողովի եզրակացության հիման վրա, եթե ապրոբատորը գործողությունները կատարել է սահմանված կարգի խախտումներով:

IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

11. Ապրոբատորը հավատարմագրման մասին որոշումը կարող է բողոքարկել օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վ Կ Ա Յ Ա Գ Ի Ր N ____

ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ (ԱՊՐՈԲԱՏՈՐԻ)

Սույն վկայագիրը հաստատում է, որ _____
_____
(անունը, ազգանունը, անձնագրի համարը, ում կողմից և երբ է տրված)

իրավատու է _____
(գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկը,
_____
որոնց ցանքերում թույլատրվում է իրականացնել ապրոբացիա)
_____
_____
իրականացնելու սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ (ապրոբացիա):

Վկայագրի գործողության ժամկետը _____
(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Տրված է _____
(օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2005 թվականի
դեկտեմբերի 9-ի N 2239-Ն որոշման

Հավելված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Տ

ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(ԱՊՐՈԲԱՑԻԱՅԻ) ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտի համարը

Հայտը ներկայացնելու ժամկետը ___ _____ 200 թ.

Հայտատու _____

(անունը, ազգանունը, բնակության վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը,

_____

գտնվելու վայրը)

_____

Ապրոբացիայի է ներկայացվում

Մշակաբույսը	Սորտը	Դասը	Նախորդը	Տարածքը (հեկտար)

Ցանքատարածությունները գտնվում են _____

_____

_____:

Խնդրում եմ կատարել նշված սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ (ապրոբացիա):

Հայտատու _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 200 թ.

(հավելվածը փոփ. 01.12.16 N 1219-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**